Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2
«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10.03.2025թ.

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝
- Ռոման Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝
- Կարեն Գալոյան
- Արմեն Քոչարյան
- Էդգար Պողոսյան

Քարտուղար՝ Լիլիթ Գևորգյան

Նիստի օրակարգ (մեկ հարց).

1. Գնման ընթացակարգի հրավերի շրջանակներում ստացված հարցման վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին.

Նիստի ընթացքում քննարկվեց **«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8»** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցումը և հարցման վերաբերյալ պարզաբանման հայտարարությունը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ հաստատել հրապարս կման ենթակա պարզաբանման հայտարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ռ. Արշակյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Կ. Գալոյան

_____ Ա. Քոչարյան

_____ Է. Պողոսյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի մարտի 10-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը «**ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8**»

Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 10.03.2025թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1՝

Բարև Ձեզ, հարգելի պատվիրատու, կխնդրեինք պարզաբանել 5.6.7.8 կետերին առնչվող լամինացված դսպ-ն միայն երեսպատված լինի թե ներքևի հատվածում էլ պետք է լինի,ինչպես նաև ոտքերի հատվածի մասին կխնդրեինք ավելի մանրամասն տեղեկացնեք թե ինչ նյութից է հարկավոր պատրաստված լինի:11.12.13.15.16 առնչվող էսքիզնեը բացակայում են :Կանխավ շնորհակալ ենք:

Պարզաբանում N 1՝

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8» գնման ընթացակարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններին առնչվող կահույքը պետք է պատրաստված լինի երկկողմ լամինատից: Իսկ 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների կահույքների էսքիզներին կարող եք ծանոթանալ Պետական գույքի կառավարման կոմիտեում:

Հարցադրում N 2՝

Հարգելի պատվիրատու խնդրում եմ ներկայացնել պարզաբանում 3,4-րդ չափաբաժինների մասով: Մասնավորապես 3-րդ չափաբաժնում նշված է նստատեղի լայնությունը 50սմ արմնկակալերի հեռավորությունը դրսից դուրս 55սմ: Սա նշանակում է որ արմնկակալերի լայնությունը պետք է տատանվի 2,5-3սմ ինչը բավականին նեղ է և ամրության տեսանկյունից ոչ հուսալի: Խնդրում եմ ասել ընդունելի կլինի արմնկակալերի դրսից դուրս չափը 60+-1սմ չափը՞: 4-րդ չափաբաժին՝ գրված ՝ ընդհանուր բարձրությունը 150սմ-ից ոչ պակաս: Արդյոք սա ճիշտ չափ է նշվա՞ծ քանի որ նման բարձրությամբ աթոռներ մետրը պահելով էլ դժվար է պատկերացնել: Գրել եք մետաղական անիվներով՝ ենթադրում եմ որ ի նկատի ունեք անիվի հիմքը: Նստատեղը և թիկնակը շարժական՝ եթե ի նկատի ունեք բարձրանալ իջնել ֆիքսել աշխատանքային դիրքում սա հասկանալի է եթե դրանք առանձին առանձին պետք է շարժվեն կառավարվեն կխնդրեմ մանրամասնել: Ամրահենակները մետաղական՝ երեսպատված փայտով՝ ընդունելի կլինի մետաղական ամրահենակներով և կաշեպատ պաստառով տարբերակը՞: Կանխավ շնորհակալ եմ:

Պարզաբանում N 2՝

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8» գնման ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժիններին առնչվող կահույքի տեխնիկական բնութագրում չափսերը հստակ նշված են, 4-րդ չափաբաժնի պարամետրերը՝ բարձրությունը՝ բարձրացված վիճակում, մինչև թիկնակի վերևի հատվածը 150 սմ, մետաղական հիմքով՝ խաչուկը մետաղական, այսինքն ճոճվող, ֆիքսվող աշխատանքային դիրքում թիկնակը և նստատեղը առանձին կառավարվող չեն, ամրահենակները մետաղական, երեսպատված փայտով:

Հարցադրում N 3՝

Խնդրում եմ պարզաբանել 5 և 6 չափաբաժիններում նշված տեխնիկական բնութագրի Շարժական կողադիրը 300*500*550 չափերից որն է երկարություն լայնություն, խորություն կամ բարձրություն: Եվ եթե կա նկար կամ գծագիր խնդրում եմ տրամադրել : Եվ անհասկանալի է այս Սեղանաձևի վրա ըստ դիրքի

մոնտաժվելու են 8 մմ ապակու պահող արտաքին մետաղական դետալներ որոնք իրենց վրա կրելու են 8 մմ հաստության անթափանց օրգանական ապակի 300 մմ բարձրության ինչ նկատի ունեք: Չափաբաժիններում նշված են ըստ էսքիզի բայց հրավերի փաթեթում էսքիզներ չկան, խնդրում ենք տեղադրել էսքիզները: Խնդրում եմ 14 և 15 չափաբաժինների մեջ նշված չափերը գչել թե որն է բարձրություն լայնություն և խորություն:

Պարզաբանում N 3՝

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8» գնման ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների շարժական կողադրի լայնությունը պետք է լինի 300, խորությունը՝ 500, բարձրությունը՝ 550: Նշված չափաբաժինների մետաղական դետալը պետք է լինի Π-ձև կտրվածքով, գործարանային ներկում անցած, մի կողմից իր վրա ունեցող ֆիքսատոր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանին:

Հեռախոս՝* 011-54-66-40*:
***Էլեկտրոնային փոստ՝ info@spm.am*:**

«ՊԳԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

10.03.2025թ.